




ԶՈՐՐՈՐԴ ՏԱՐԻ

ԹԻԻ 139

21 ՄԱՐՏ 1914

ԿՐՈՆԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՏԵՂԵԿԱԳՐԱԿԱՆ

ՇԱՐԱԹԱԹԵՐԹ

ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ՊԱՏՐԻԱՐԿԱՐԱՆԻ

ՏՕՒԱՑՈՑՑ

Մարտ	22	†	Կիր. քկ.	Ե. Քառասնորդաց պահոց: Դասաւորին:
	23		Բշ. գձ.	Իթ. or աղցից:
	24		Գշ. գկ.	Լ. or »
	25		Դշ. դձ.	Տօն Աւետման Ս. Կուսին Մարիամու: Եւ ԼԱ. or Մեծ-Պահոց:
	26		Եշ. դկ.	ԼԲ. or աղցից:
	27		Ուր. աձ.	ԼԳ. or »
	28		Շք. ախ.	ԼԴ. or Մեծ-Պահոց: Եւ Սրբոյն Գրիգորի մերոյ Լուսաւորչին մուսն ի վիրապն:

Արուանիս Ս. Ասուածածին Եկեղեցւոյ մէջ առաջիկայ Մեծ Պահոց Կիրակի օրերուն քարոզները բուրքերէն լեզուով պիտի տրուին նոյն Եկեղեցւոյ Մեծաւոր Գեր. Ասուրեան վարդապետի կողմանէ, հետեւեալ նիւթերուն վրայ.

Ա. Կիրակե. Պէտք է որ գնուի Եկեղեցւոյ մէջ ուսուցանող իշխանութիւն մը:

Բ. Կիրակե. Պէտք է հաւասար Եկեղեցւոյ խօսքին:

Գ. Կիրակե. Պէտք է գործնականապէս հաւասար Եկեղեցւոյ խօսքին:

Դ. Կիրակե. Պէտք է հնազանդիլ Եկեղեցւոյ:

Ե. Կիրակե. Պէտք է սիրել Եկեղեցին:

Ծանօթ.— Կիրակի օրերը ժամը 4ին երեկոյեան ժամերգութիւն պիտի կատարուի եւ անմիջապէս յետոյ Քարոզ պիտի տրուի:

* * Նոյն Եկեղեցւոյ մէջ Մարտ 23-28 հոգեւոր կրթութիւն տեղի պիտի ունենայ:

Այս կրթութեան միջոցին ամեն երեկոյ ժամը 5ին Վարդարան պիտի զուրցուի, յետոյ բուրքերէն լեզուով պիտի քարոզէ Գեր. Կղեմէս Վ. Ասուրեան, եւ ապա Ամենասուրբ Հաղորդութեամբ օրհնութիւն պիտի տրուի



ԿԱԹՈՂՈՍԻԿԷ ԱՐՁԱԳԱՆԳ

ԿՐՕՆԱԿԱՆ, ԴԻՏԱԿԱՆ ԵՒ ՏԵՂԵԿԱԴՐԱԿԱՆ
ՇԱՐԲԱԹ-ԱԹ-Ե-ՐԹ-

Զորրոդ սարի 21 Մարտ 1914 Թիւ 139

«Սրբազան Քահանայապետն Պիոս Ժ. կր մաղթէ որ Կաթողիկէ Աւանդանց շարքաբերքը շա-
րունակէ Հայաստանի կաթողիկէ ժողովրդոց մէջ, մանաւանդ ի գաղափար, փրկարար առաքելութիւն մը կա-
սարել, ի բարգաւաճախ կրօնից եւ ի հոգեւոր օգուտ հոգիներու: Այս մաղթանաց արդիւնաւորութեան համար
Սրբազան Հայրն արտաքին կ'օրհնէ յիշեալ Շարքաբերքը, ինչպէս նաեւ անոր խմբագիրներն եւ ընթերցողները»:

Նամակ Կարգ. Մէրի սէլ Վայի, առ Ամեն. Տ. Պօղոս Պետրոս Ժ. Թեոքեան, Հայ Կաթողիկէ Պատրիարք Կիլիկիոյ
23 Նոյեմբերի 1912, ընդ 60780 քուտնամարտ:

ԴԵՊՅԵՐ ԵՒ ՍԿԶՐՈՒՆՔՆԵՐ

ՏԵՐ ԿՈՄԻՏԱՍԱՅ ԴԱՐԱՇՐՋԱՆԸ

Տ. Կոմիտասայ երկու գեղեցիկ երկասի-
րութիւնները աւարտեցինք մեր վերջին թի-
ւով, սակայն այդ դարաշրջանը (époque),
ժամանակամիջոցը, մեզ Կաթողիկէիցս համար
անհուն կարեւորութիւն մը ունենալուն,
պահ մըն ալ պիտի զբաղինք անով, և ուրիշ
վաւերաթուղթ մին ալ պիտի սկսինք հրա-
տարակել յառաջիկայ թիւով: Հոս կ'ուզենք
ընդհանուր տեսութիւն մը պարզել այն ժա-
մանակին դառնաղէտ անցքերուն վրայ:

Ազգաց պատմութեան մէջ ինչպէս փառ-
քի, քաջութեան, մեծամեծ առաքինութիւն-
ներու, ազնուական նկարագրի և ոսկեղէն
դպրութեան, նոյնպէս բարոյական անկումի,

վատասերման, նախատախից ստորնութեան
դարազուլումներ կան:

Սակայն չենք կարծեր թէ վերջին դարե-
րու մէջ էջմիածնական Հայոց դէպ ի Կա-
թողիկէութիւն ունեցած վերաբերումէն ա-
ւելի անգույշ, քինախնդիր, վատ ու եղե-
րական և չարունակեալ դէպք մը արձանա-
գրած ըլլայ ուրիշ ազգի մը պատմութիւնը:
Տեւողութեամբն ու տեսակովը, ընդհանրու-
թեամբն ու բարբարոս խժգոնութեամբը, առ-
գիտական նախապաշարումներովն և մինչև
հիմա ի գործ դրուած մաքիավէլական վրի-
ժառութեամբը, այդ վերաբերումը անցած
զանցած է նման ամէն դէպքերու սահման-
ները: Երկարաեւ, կանխամտածուած նըր-
բութեամբ, անյազ վայրագութեամբ դառ-
նադառն հալածանքի մը շարքերը իրարու
յաջորդեցին: Հայ պատմութեան այդ սու ու
դժբախտ էջերը կուլան դեռ եւս:

Տ. Կոմիտաս փառապանծ Նահատակին ժամանակամիջոցը այդ տխուր իրականութեան ցայտեցուցիչ ու կարկառուն մէկ մասն ու փաստն է ։

Հալածանքը , գոնէ պաշտօնապէս , ան ատեն սկսաւ . սկսաւ , ու սուղ ժամանակի մը մէջ դաժան անագորոնութեան գագաթնակէտըն հասաւ . բոցակէզ հրդեհեց անմեղունակ բազմաթիւ ժողովրդեան մը կեանքը ։

Քանի մը տարուան միջոցին՝ Եփրեմ , Աւետիք՝ երկու անգամ , Միքայէլ , Սահակ Ապուլիսցի , Իզմիրցի Օհաննէս , ետեւէ ետեւ իրարու սոսկալի մրցում մը կատարեցին այս արիւնալի շահատակութեան մէջ ։

Ասոնց մէջ սակայն՝ անգթութեան դափնին երկուք են որ կը խլեն գլխաւորաբար . Աւետիքն ու Իզմիրցին ։

Աւետիք՝ անհանգարտ , յանդուգն , խարդախ , հնարամիտ , խորագէտ , անխիղճ և անհունօրէն փառամոլ , էրզրումէն վազած եկած էր իր բարեկամ Միւֆթի Ֆէյզուլահին քով՝ պատրիարքութիւնը յափշտակելու համար , զոր և յաջողցուց ամէն ապօրինի միջոցներով , խռովութիւններով ու կաշառքներով , և ի մասնաւորի , Կաթողիկէից ոխերիմ եղող այս Միւֆթիին գործակցութիւն խոստանալով զանոնք հալածելու . արդէն ինքն ալ լուծելու անձնական քէն ու վրէժ ունէր ։ Եւ ձեռնարկեց դահիճի գործին , փառքի ծարաւի , դրամի ծարաւի , արեան ծարաւի ։ Իր գրաւոր երդումներուն ալ զրոյց ։ Կարծես ծնած էր զաշխարհ խռովելու եւ արդարները փորձելու . իր ներկայութիւնն ու բացակայութիւնը միանգամայն աղիտաբեր էր ։ Ինչ խեղճ վախճան ունեցաւ սակայն . սոսաջին անգամ հազիւ թէ պրծաւ կախաղանէն . երկրորդ անգամ վրէժը տուաւ , — իրաւամբ կամ յանիրաւի , — այն վէս ու նա-

խատալից հայհոյանաց զոր արձակած էր Գաղղիոյ թագաւորին դէմ¹ ։

Իզմիրցին՝ աւելի կատաղի , վայրենաբարոյ , սովալլուկ գայլի անգթութեամբ , բիրա եւ ամբարիշտ , անհունօրէն կը գերազանցէր Աւետիքը . Դրան հետ կարգադրութիւն ըրաւ բնաջինջ ընելու համար Կաթողիկէները² ։ Հ. Յակինթոս հակիրճ խօսքերով այդ անսովոր դէմքին նկարագիրը քարաքանդակ կը գրուէ . « Այս մարդը , կ'ըսէ , քրիստոնէայ այս խարհի մէջ ճիւղալ մը , հրէշ մը կրնայ համարուիլ . Կաթողիկէից դէմ իր ատելութիւնը , հռովմէական կրօնքի դէմ իր հակամարտութիւնը , իր չար սիրտը անպիսի համբաւ մը չինած էին իրեն , զոր նա բնաւ սուտ չէր հանած և որոնց վրայ հիմնեց նա իր դիտումները Կ. Պոլսոյ պատրիարքութիւնը ձեռք ձգելու . . . հայ կաթողիկէները ի սպառնալու ջնջելու համար³ » ։ Ինչ դժբախտ վախճան ունեցաւ սակայն . վերահասու ըլլալով իր խախուտ դիրքին , հարստահարեց , զրամներ շորթեց , աճապարեղ՝ գաղտուկ նաւ նստաւ փախաւ դէպի Պարսկաստան , բայց չհասաւ ուր դէմ եղեալն էր . քանզի իր բազմաթիւ հայ թշնամիները՝ կառավարութենէն հրաման առնելով , ճեպով շտապաւ հետապնդեցին ամբարիշտ փախստականը , հասան կալանաւորեցին , բերին ի Կ. Պոլիս և թիարան նետուեցաւ շղթայակապ⁴ ։ Ապա յանկարծամահ եղաւ ։

Իրաւ է որ յետոյ , շուրջ մէկ ու կէս դարու միջոցին , ասոնք ուրիշ փառաւոր նախանձախնդիր մրցակիցներ ունեցան Քրիստոսի հաւատացեալները հալածելու դժոխաւ .

¹ Անդ , նմկ . 43 Փետր . 1703 :

² « Infiniment plus inique et plus perfide... à exterminer les Catholiques Arméniens » . Անդ . նմկ . 7 Նոյեմբ . 1707 :

³ « Cet homme qui dans le monde chrétien peut passer pour un monstre... Sa haine contre les catholiques, son opposition à la religion romaine, son mauvais cœur lui avait établi dans sa nation une réputation qu'il n'avait jamais démentie, et sur laquelle il a fondé ses vues au patriarcat de Constantinople pour... abîmer les Arméniens catholiques » . (Նամակ 7 Նոյեմբեր 1707) :

⁴ Անդ , նմկ . 12 Մարտ 1709 :

¹ Հ. Յակինթ . նմկ . 2 Հոկտեմբեր . 1702 :

² « Avédik qui paraît être né pour troubler l'univers et exercer les justes... S'il est ici, sa présence y met le désordre partout; s'il n'y est pas, son absence y occasionne des persécutions inouïes. » Անդ , նմկ . 14 Մայիս , 1707 :

յին ու չարարուեստ հնարագիտութեան մէջ . բայց կրնանք ըսել թէ ո՛չ մէկը կրցաւ անոնց չարաշուք բարձրութեան հասնիլ, եթէ ի բայ առնուի 1826ի աննախընթաց կատա-
լի հալածանքը, որու օրագրական պատմու-
թիւնը՝ եթէ Տէրը կամենայ, ի մօտոյ պիտի
հրատարակենք, իբր անմահ վաւերաթուղթ
մը հալածանաց անգթութեան և մեր նախա-
հարց անխախտելի կաթողիկէ հաւատքին :

Ուստի հայ Կաթողիկէից դէմ պաշտօնա-
կան հալածանքի այս խուժուժ ժամանակա-
մը շնորհիւ մէջ վարձուելի փոթորիկ մը չըլ-
ծայազերծ ասպատակեց Դրիստոսի բուրաս-
տանին մէջ . առաջին, քանդեց, խլեց .
թարչամեղուց : Սէկ նազելի վարդ մը սա-
կայն, կարմրորակ շողերովը փողփողուն,
քաղցր բուրումնակովը սրարեցուցիչ . չնաշ-
խարհիկ մէկ վարդ մը քաղեց նրկինք՝ իր
անմահական Սթեաններուն համար, — իր
արեամբ վկայած Տ. Կոմիտաս ցանկալի նա-
հատակը :

Սենք այս տխրահռչակ ժամանակամիջոցը
փոքր ի շատէ ուսումնասիրեցինք մեր թեր-
թին մէջ, մանաւանդ իր զոյգ հնոցավառ
խարուկակենդրոններուն մէջ, 1702 — 3, և
1706 — 7 : Առաջինը՝ նոյն ինքն Տ. Կոմիտա-
սայ ինքնագիր երկասիրութեամբ, ա՛յնքան
շահեկան և հաճելի ոճով կենսագրութիւն մը
այն չարաբաստիկ և ճակատագրականօրէն ա-
ղիտաբեր մարդուն՝ որ Աւետիք Պատրիարք
կոչուեցաւ : Իսկ երկրորդը՝ նոյն ինքն Տէր
Կոմիտասայ փառապանծ վկայութեան տա-
րեգրութեանը մէջ, Գեր. Մաղարեան Վ. Էն
երկասիրուած, յորում Բզմիրցիին ձախաւեր
դէմքը դժոխային ողբալի ցոլքերով ի յայտ
կու գայ :

Սակայն, աւա՛ղ, դեռ Դիւն սարսուղ-
դեցիկ մանրամասնութիւններով բեռնաւոր-
ուած է այդ ժամանակը . կարծես եղիշէի ա-
մենէն սրտաճմլիկ մէկ Յեղնակոն է որ կը
պարզուի մեր աչաց առջեւ, Կայէնի եղբայ-
րանեմք դաւերով, զաւրելի անագործնու-
թեամբ նշանաւոր տեսարան մը :

Ահաւոր ճգնաժամերուն մէջ ոգեսպառ
տաքնապեցաւ Կաթողիկէութիւնը, Անխիզճ

և անգութ հոգեւոր պետեր, պետեր ան ա-
տեն գրեթէ ամենակարող, — մին՝ Աւետիք,
անսահման պաշտպան ունենալով հզօր բա-
րեկամը՝ և Կաթողիկէից երդուեալ ռիսերիմը՝
Ֆէյզուլլահ Միւֆթին ¹, միւսը՝ Բզմիրցին,
անսասան նեցուկ ունենալով Կաթողիկէից
կատալի թշնամի ամենահզօր Զօրուլու Ալի
փաշա Սեծ-Վէլլիը ², ամէն պարագայի մէջ
արծաթը իր սեւ սգաւոր պաշտօնը կատա-
րելով, — այս հոգեւոր պետերը արձակ ե-
րասանակ պոթեկացուցին իրենց վայրագ կիր-
քերը և փքոցուսոյց հրահրեցին ագէտ և ա-
րիւնուշա խուժասին ասորին ու մոլեկան
յօժարութիւնները, մանաւանդ անգիտակից
և եղբայրասպան վրիժառութիւնը : Գոհնիկ
ռամկին՝ որուն կ'առաջնորդէին գոհնկապոյն
այս պատրիարքները, աշխարհագրորդ աշա-
ղակներովը վրդովեցան այդ տարիները, լեց-
ուեցան ապարանք, խլացան արքայական ա-
կանջները ³, եղբայրաբաւ ձեռքեր գործեցին
ամէն անօրէնութիւն : Դրիստոսեւթեան ա-
ռաջին դարերու շարազատ մէկ նկարագիրը
վերականգնացաւ յաւեա . կամ բողոքական
կատաղութիւնը կարծես իր մեղեքական ժա-
հալոյս շարերը վը պտսցնէր Իրլանտայի մէջ .
այո՛, Իրլանտացի կաթողիկէ ժողովուրդեան
բախտապից եղաւ հայ կաթողիկէ ժողովուրդն
ալ, անվերջ տարիներով, ի սպանդ վարեալ
ոչխարներու պէս :

Այս պժգալի ատելութիւնը՝ ընդդէմ այն
ամէն բանի որ Կաթողիկէ է, արմատացած
մնացած է էջմրածնական համայնքին մէջ,
և միշտ մահաբեր ճրւղերով կ'ընթերլի՝ թէւ
այլազան ձեւերով : Էջմրածնականը չի կրնար
երբեք սիրել Կաթողիկէն՝ իբրեւ այն . կը
սիրէ յոյնը, բողոքականը, իսլամը, բայց

¹ «Le Grand Mufti, l'ennemi juré des Catho-
liques» (Հ. Յակիմթ. նմկ. 23 Դեկտ. 1702) : Թէ ինչ-
պէս աղետալի վախճանով պատժեց զինքը արդարն
Աստուած՝ պատմեց Տ. Կոմիտաս իր վերջին երկին մէջ :

² Հ. Հակիմթ. նմկ. 40 Յուլիս, 1706. 44 Մա-
յիս 1707. 22 Յուլիս 1707 ևն. : Եւ սա կրեց իր տը-
ժանի պատիժը, արքայեցաւ ու խեղճամահ փչեց հո-
գին :

³ Անդ, նմկ. 7 Նոյ. 1707 :

կ'ատէ զԿաթողիկէն . Կրնայ ըլլալ որ էջմիածնականը անկրօն ըլլայ . սակայն և այնպէս կ'ատէ զԿաթողիկէն . Իր արեան մէջ է այս թոյնը . իր երակներուն մէջ կը խաղայ . իր սրտին մէջ կաթած է . Հալածանաց տարիներուն՝ ճգնեցան ջնջել , անճիտել Կաթողիկէութիւնը . ապա եւ հիմա , որովհետեւ չէին կրնար այլեւս հալածել , ռիւր կենդրոնացուցին միշտ ջնջելու անճիտելու համար . Պատմութիւնը մարդուս կիրքերուն ու դէպքերու կրկնութիւնն է լոկ , թէպէտ այլեւայլ ձեւերով և տարբեր երկինքներու տակ :

Պէտք է իմանայ Կաթողիկէ Հայը որ էջմիածնականներու բոլոր մտածմունքները ինքնաբերաբար՝ և նոյն իսկ բնազդօրէն ու անգիտակցաբար , կ'ուղղուին մէկ կէտի , — Հայ Կաթողիկէութեան ջնջումը . Իրենց թշնամութիւնն ու բարեկամութիւնը , խօսքն ու գործերը , պարսաւն ու գովասանքը , անքաղաքավար անուանակոչութիւնները ու կեղծ փառաբանութիւնը , քաղցրութիւնն ու անուպայութիւնը , ա'յս նպատակակէտին միայն ուղղուած են . թէ և անհեռատեսութիւն , ազգակործան սնհեռատեսութիւն կ'ըլլայ այս . հոգ չէ . չեն կրնար մերկանալ այս երկրորդ բնութիւնը . աս այսպէս է . անճողոպրելի՛ ճակատագիր . Inexorable fatum! . Որքան միամիտ պէտք է ըլլան այն Կաթողիկէները որոնք անվերապահ ձեռք կը կարկառեն կամ կը սեղմեն . . . Ձեռն տեսներ իրականութիւնը . երբ Կաթողիկեայք յաջողութիւն մը ունին , էջմիածնականաց քով զաքարիական լուծութիւն անխզելի . երբ ձախողութիւն մը , ան ատեն ի ձայն փողոյ , սրնգի , քմբկի եւ ֆնաւրի եւ զաւղի . . . մեր մէջ պատահած ըմբոստութիւնները ահաւոր փութաշանութեամբ կը խրախուսեն , կը հրահրեն . . . իրենց սէրը կը շռայլեն ան լայնամիտ Կաթողիկէ անուանեալներուն որոնք կամ անտարբեր են կամ անկրօն , այսինքն՝ որոնք Կաթողիկէ չեն . . . ապաժաման յոյսերով իրենց կը հրաւիրեն մեր թերացողները , նոյն իսկ իրենց ազգային ժողովին մէջ յանխորհուրդս կոչեր կարդալով . նո'ր արուեստ , նո'ր տպագրութիւն , նո'ր երեւոյթ , թէ եւ զրաջան վաս-

տակ . իր'ստ է ընդդէմ խթանի աքացել . Եղբա'յր ենք , եղբա'յր ըլլանք , կ'ըսեն , ու կ'ուզեն որ Կաթողիկէ չըլլանք . Այո՛ , եղբայր ենք , և եղբա'յր ըլլանք յաւերժ , և եղբայր ամենասիրական . բայց գոնէ թո'ղ չդպչին՝ ճշմարտութիւնը արեգակնամանաւ ապացուցուած մեր հաւատալեաց , թո'ղ չհալածեն մեր Կաթողիկէութիւնը , որ մեր կեանքն է :

Ահա ուրեմն ստոյգ է թէ պատմութիւնը դէպքերու կրկնութիւնն է , այլազան կերպարանաց ներքեւ . Ուրեմն հալածանքի ա'յն ժամանակամիջոցին , 1701-1707 , ուսումնասիրութիւնը , հաւատարմութեամբ գրեթէ իւրեւ ի հայելւոյ կը ցոլացնէ նաեւ ապագայ ժամանակները :

(Շարունակելի)

ՅԻՍՈՒՍ ԲՐԻՍՏՈՍ (*)

Ա. Լ. Թ. Ը. Ն. Ճ. Ը. Պ. Ա. Պ.

Յիսուս Բրիստոս եպրքեղ Բենի Բենիսիւնի
Ալլահ Էվաթը Բէսմիէ Էքմէթի
Իլլա Ալլահա խաաս օլան մաւհապէրի օն խաթէօի
(Տեղամի)

Յարգ իտէլիմ քի , վալիտէ սին , օլ գատար հասրէթլէ ինթիզար էյլէտիքտէն արզու էթտիքտէն սօնրա մալիք օլտուղըն սէվկիլի էվլատընը տիզլէրին իւզէրինտէ գօնտուրմըլ թէպէտսիւմլէրիլէ մէմնուն մէսրուր օլույօրսըն . Պիրիսի վար տըր քի ճիկէրբաւէնտէն զիյատտէ սէվիլտիլի վէ իճապընտա օ էվլատընը քէնտիսինէ ֆէտա էյլէմէքլիլինի իսթէր վէ պունը իսթէյէն՝ Յիսուս Բրիստոս տըր . «Օղլունը վէ եա գըզընը պէնսէն զիյաթէ սէվէն պանա լայըգ շէյիլ սիր» :

Պունլարտան տահա տէրին օլան վէ իքի ճիւմլին պիր վիւճուտ թէյէթիլ էյլէտիլի մէհապպէթի միւթէգապիլէ իւզէրինէ պինա իտիլմիշ պուլընան պիր ալէմտէ պիլէ , հէր քէսէ մէստուտ օլան իշ իշէ տալիւլէրէ գատար կիրիպ տէ եէկտիկէրինտէն տահա իւսթիւն պիր մէհապպէթլէ սէվիլմէյի իսթէյէն

(*) Յեւ թիւ 137, էջ 147

պիտի վար տրո՞ւ. «Քեցի գարըսընը պեցեցն
գիյասե սեվեցն պանա լայրգ սեյիլ սիր :»

Ամնա պու միւմքին մի. պու պիր տիւլա-
նէլիք տէյիլ մի. Պու կիպի շարթլար վազ
էլլէյէն քիմէ, աճէպա քէնտի քէնտիսինի
հէր քէստէն թէրք օլունմայա, եաբ եալընըզ
գալմայա, վէ աորլ քէլիմէսինի գուլլանմազ
իսթէրսէք, հէր քէսին իսթիհզա վէ հազա-
րէթինէ մարուզ պուլընմազ թէհլիքէսինի գա-
պուլ իթմիշ օլմա՞զ մը, միագաթ, շայէտ տը-
զու իթտիյի պու ֆարզը մէհապպէթինի պա-
զըլար թարաֆընտան պուլլա պիլէ, պուն-
տան տահա գիյատէ մէքուհ նէ՞ թէսավ-
վուր օլունապիլի. չիւնքի ինսան իչին բէ-
տէրինտէն, վալիտէսինտէն, գէվճէսինտէն
վէ էվլատարընտան իւսթիւն եալընըզ պիր
Ալլահ վար տրո՞ւ. Ալլահտան գիյատէ կէօս-
թէրիլէն մէհապպէթ իսէ մէքուհլիլէթ տիր :

Մագաթ պիզ տէվլամ իտէլիմ. պուրատա
հէր շէյ ինսանի ազըն խիւաֆընտա տըր :
Թիսուս Բրիստոս եալընըզ հէր քէսեցն վէ հէր
եյսեցն իւսթիւն սէվիլմէք իսթէմէյօր, հաթ-
թա պու կիպի գաւի, գաւի օլտուղը գա-
տար տա դարիպ վէ միւմքինսիզ օլան մէ-
հապպէթի քօլիւմիւնսեցն սօնրա պուլաճաղընը
պէր վէճը բէչին խապէր վէրիյօր : Սաղը-
ղընտա սէվիլմէյիպ տէ, էօլտիւքտէն սօնրա
սէվիլէճէյի ֆիքրինտէ պուլունույօր : Տահա
պու տիւնհատա իքէն վէ եօգարտա թասիլի
էթմէյէ չալընտըղընըզ պիլ ճիւմէ կիւզէլլիք
վէ ճաղիպէլէր ծոռն սիմասինտա բարլամագ-
տա իքէն սէվիլմէյիպ տէ վէֆաթընտան սօն-
րա սէվիլէճէյինէ իւմիտ իթմէք նէ՞ դարիպ
շէյ տիր : Պէր հայաթ օլտուղը վազըթ ծոռն
իչին քիմ ֆէտայը նէֆա իթմիշ տիր : Բիմ
Դողգոթայա ծոռնլա պէրապէր չըգմըշ տըր :
Քէնտիսի եալընըզ չըգմըշ տըր օրայա, վէ
Բիթապը Շէրիֆին պուլուրտըղը իւզըէ, օ՝
Դողգոթատա պիր թէսէլլի խիճի արարտը
վէ պուլամազտըր : Սաղըղընտա մէթրուք գա-
լըպ, սաղըղընտա ինքիս օլունըպ, սաղը-
ղընտա դամազլանըպ, սաղըղընտա սէվիլ-
մէյիպ տէ, էօլտիւքտէն սօնրա քէնտի ար-
զու իթտիյի իւզըէ գաւի, գահրամանանէ վէ
ֆէվզ էլ ատէ մէհապպէթլէ սէվիլէճէյի խիւ-

լեանընտա պուլընմազ, թէքար տէրիմ քի
էյէր պու պիր Ալլահ իչի տէյիլսէ մութլագա
պիր տիւլանէ իտտիասը տըր :

Եաղը՞զ, տէմէք տիր քի օ ինսանըն գալ-
պինի տահա թանըմայօրտըր : Մէհապպէթին
էն պէօյիւք զըտասը՝ հազըր պուլընմազ օլ-
տուղընը վէ ինսանըն բէք գօլայըղըլա ու-
նութտըղընը տա պիլմէյօրտըր : Մէգարըմըզ-
տան էօթէ պիր գաչ սատըզ կէօզ եաչը տամ-
լալարը պիզի թագիպ իտէր, ֆագաթ օ աղ-
լայանլարտա չօզ կէչմէզ կէլիւր աչի թօրագ
իչինտէ պիզիմ իլէ պէրապէր եաթարլար վէ
պիր կիւն լագայտ եօլընըն պիրի հէմ սէ-
վէնլէրին վէ հէմ տէ սէվիլէնլէրին մէզարը
իւզէրինտէ ֆիթուրսըզճա տօլաչըր : Իչթէ
գէվալը մէհապպէթ պու գատար ազ տէվլամ
իտէր : Պու պէօյլէ օլտուղը հալտէ, սաղը-
ղընտա սէվիլմէյիպ տէ էօլտիւքտէն սօնրա
իւա նիհալէթ իւլ էվգաթ սէվիլէպիլէճէք տիր
րիւլալարը կէօրմէյի՝ եօք, տօղրուսը պէն օ
գատար միւնէվլէր, օ գատար սալիմ պիր
ազըլ սահիպինտէն պէրլէմէդտիմ :

Լաքին սէն պազ իչէ քի, պու գատար
դարիպ օլան պու իտտիա՝ թէմամըյլա, ֆաղ-
լասըյա պաչա չըգմըշ տըր : Հէման քէնտի
էօլիւր էօլմէզ, մէզարընըն իւզէրինտէ մէ-
հապպէթ տիր ուլանըր, պուսէլէրէ դարգ օ-
լուր : Պիր տէ նէ՞ պագարսըն, էրքէք, գա-
տըն, իսթիյար, կէնճ պըզլար Թիսուս Բրիս-
տոսա աչըզ օլմուշ, գալպլէրի ծոռն մէհապ-
պէթիլլէ թաչմըշ, ծոռ քէնտի տար աղա-
ճընտան աչաղը ալըրլար, էլլէրինի վէ ա-
յագլարընը էօթէրլէրտի : Պիզի ծոռն մէհապ-
պէթինտէն նէ՞ այըրապիլէճէք տիր : աճը՞զ
մը, սուսըզլը՞զ մը, թէատտի՞ մի : Ուայր,
խայր, Թիսուս Բրիստոսա օլան մէհապպէթի
եիւրէքլէրիմիդտէն չըգարմայա հիչ պիր շէյ
միւզթէտիր օլամայաճագ տըր :

Նէ՞ աճայիպ հալ. սէնէլէր կէչտի, ասը-
լար կիւզէրան օլտու վէ հէր տիւրլիւ հիս-
սիյաթը մահվ իտէն զէման, Բրիստոսա օլան
մէհապպէթ հիսսիյաթընը մահվ էյլէմէտիքտէն
մատա, արթըրտը, չօղալթտը, պէօյիւթտիւ.
Իսթիլալար պիլէ ծոա գարչը աճիզ գալ-
տըլար : Ֆիլհագիգա, էվրօրա պիր չօզ թագ-

սիմաթա տիւշար օլտու, պիր խայր քէշմէ-
քէշլէրտէ պուլլնտը, պին պիր բարչայա պէօ-
լիւնտիւ. ֆազաթ հէր տիւրլիւ թագսի-
մաթտան արի պուլլունան պիր պիրլիք գալ-
տը օրատա, պու պիրլիք իսէ Յիսուս Բրիս-
տոսա օլան մէհապպէթին պիրլիյի տիր, Փո-
տիոս Բօմա Բաբասընըն չօպանլըգ աստը ալ-
թընտան Բուժ իմբէրաթօրլըղընը պալտըրա-
պիտի. ֆազաթ Շարգ ճէմաթլարընըն գալպ-
լէրինտէ հիւքմֆէրմա օլան Յիսուս Բրիստոսը
քէնտի թախթընտան էնտիրէմէտի. Սէքի-
դինճի Հէնրիկոս Խնկիյիգ միլլէթի մուազգա-
մասը արասընա րաֆրգրլըգ թօխոււր սաչա
պիտի, հալպու քի Յիսուս Բրիստոս սէվիլ-
միյ վէ սէճտէ կէօրմիւլ օլտարագ եինէ օ միլ-
լէթին իւղէրինտէ պալա բէրմոգ օլմագտա
տըր. Լուտեք Ալմանիայը գաթօյիք իթթի-
հատընտան այրապիտի, յաքին Ալմանիա
եինէ Յիսուս Բրիստոսըն մէհապպէթինտէ
միւտալիմ տիր. Նիհայէթ Պրանարգլար պի-
լէ Վօթէր վէ Բուսուտան մարուգ գալտըր-
լարը թէճրիպէ վէ մէչազգաթլարա րաղ-
մէն, իգա իտիլէն իխթիյալարա ռաղմէն,
սճէպա Յիսուս Բրիստոս թէքմիյ Պրանա-
սըն սէճտէլէրի արասընտա նուրանի պիր
սուրէթտէ րարլամայօր մը. Բոնան՝ Յիսուս
Բրիստոս սազրլըղնտաքինտէն չիմտի պին
գաթ զիյատէ սէվիլմիյ տիր տէր:

(Մապասի վար)

ԱԶԱՏՈՒԹԻՒՆ

Գ.

ՃԵՄԱՐՏՈՒԹԻՒՆԵՆ ԲԱՐՈՅՆԻՒՆԵՆ ՀԱՆԳԵՊ

Եւ իրօք ազատութիւնը բուն մարդկա-
յին կամքի ինքնորոշ շարժումն է անձնիչ-
խանութեամբ. արդ կամքն այ մեր հոգեոյն
բանաւոր ախորժն ըլլալով, բնականաբար
կը շարժի գէպի բարին. Ամէն առարկայ իր
բնութեան պահանջին և բերմանը համաձայն
մղում մը ունի բնական, որնոր զգայաղուրկ
և ո՛ր և է ձեւով ըմբռնողութիւն չունեցող
իրերու մէջ նիւթական, որոշ, թանձր մի-
տում մի է և կարեւոր է առարկային սպա-
սանութեան և զայն բնական ձգտումներու
համընդ մէջ զննելու համար. օրինակ ըլլան

ջուրը, կրակը, քարը, մին հեղուկ ու հո-
սանուտ, միւսն ծածանուտ ու լափլիզող.
երրորդն թանձր ու ծանրութեամբն հաստա-
տուն, կը ծառայեն օգտակար ընելու իւրա-
քանչիւրն ինչ բանի համար որ ստեղծուած
են, հետեւելով կուրաբար և անմիջապէս իրենց
բնութեան. Արդ նոյն մղումը և շարժումը
ունին զգայական ու մտաւոր ըմբռնողութիւն
ունեցող իրերն ալ, և ասոնց մէջ կը ձգտի
այն ո՛չ միայն բնութեան որոշ օրէնքով մը,
այլ նաև գուրտէն ստացած տպաւորութիւն-
ներու գրգռումը, և կ'ըսուի ախորժ, որնոր
զգայականներու մէջ բնազդումով կանոնա-
ւորուած է, իսկ մարդուն մէջ՝ բանականու-
թեամբ և կ'ըսուի կամք. Արդ, ինչպէս տե-
սանք, զգայական կեանքի պայմաններն այն-
պիսի կապեր ունին և թանձրացուցիչ կաշ-
կանդում, որ բնազդումը և անոր ազդեցու-
թեան տակ կատարուած շարժումներն երբէք
ինքնորոշումի, ինքնաշարժումի անկապտե-
լիութեան չեն հասնիր, որով երբէք ազա-
տութեան զարգացուցիչ և զիտակցական
ձգտումներու կատարելութիւնը և պէսպի-
սութիւնը չեն ունենար. այլ կը մնան որոշ,
թանձր, բռն և անյառաջադէմ. Ընդհակա-
ռակն բանաւոր ախորժի, կամքի շարժումն
է, որ ազատութիւն կ'ըսուի և է, և ինչ-
պէս մարդուն միտքն ալ այլեւայլ ճանաչել-
եաց պատկերներն ստանալով իր սահմանին
մէջ և չափով մը զգացմամբ ու մտօք կ'ըլ-
լայ ամէն բան և ասով կը ցուցնէ իր մէջ
Աստուծոյ նմանութիւնն ու պատկերն, յո-
րում ամէն իրաց նախապատկերն կայ. նոյն-
պէս ալ կամքը հետեւելով մտաց ըմբռնումին
կը շարժի, կը մղուի, կը ձգտի առ ամբող-
նուածն և այդ բանաւոր շարժումին մէջ է
ազատութիւնը. Ուրեմն ինչպէս միայն բա-
նաւոր արարածն ունի ազատութիւն, այս-
պէս ալ բանաւոր ազատութիւնն միայն ճշ-
մարիտ ազատութիւն է, և որովհետեւ ա-
խորժն առ բարին շարժում մի է, բանաւոր
ախորժի այս է կամքի շարժումն ալ, որ ա-
զատութիւնն է, առ բարին ըլլալու է. եթէ
առ չարն ըլլայ՝ խտտորած է և զնդծած.
Տրամաբան մարդն չի կրնար խուսափիլ այս

զօրեղ պատճառաբանութեան առջեւէն, որ հրեշտակային վարդապետինն է, բայց միայն ուրանալով հոգւոյ աննիւթականութիւնը և հետեւաբար մարդկային կամքը բնազդութիւն հետ չփոխելով և իջեցնելով զմարդն անասնոց և նոյնիսկ անդգայ արարածոց աստիճանը. «Լ'արդ ի պատուի եր եւ ո'չ իմացաւ եւ եղիւ նման անասնոց»: Տեսանք մենք մարդը բռնի նժարի մը, անբան թռչուններու համեմատուած. լսենք հիմայ անոր փիլիսոփայութիւնն ալ, որ անողոքելի կերպով կը տանի յուրացութիւն ազատութեան. «Եթէ ամենայեթիւ պատմական խուզարկութիւններն կ'ապացուցանեն աներկբայօրէն, որ մարդկութեան եւ իւրաքանչիւր ժողովուրդի պատմական զարգացումն կրնայ բացատրուիլ օրէնքներով մը, որոնք ֆիզիքական օրէնքներու պէս անհասկերու կամքն անկախօրէն կը գործադրուին, ալ ո'ւր կը մնայ անձնիշխանութիւն: Եթէ մարդիկ կը կարծեն որ իրենց ձեռքն է սահմանել անձերնին առայս կամ առ այն, պարզապէս կը ցնորին: Վասն զի կամքն ուրիշ բան չէ բայց եթէ գիտակցութիւն ունեցող անասնոց մը: Ախորժն ալ ուրիշ բան մը չէ բայց եթէ ինքնապահպանումի բնազդումն: Մարդն ի բնութենէ հարկադրուած է անխորժելու ինչ որ կրնայ իւր բարեկեցութիւնը աւելցնել եւ կը խորհի անկից, որ զայն կը նուազեցնէ: Ախորժներու պայքարին մէջ զօրեղագոյն անխորժն է որ կը յաղթանակէ: Գիտութեան գործնական իմաստութիւնը չ'ընդունիր բարւոյ եւ չարի զանազանութիւն» (հմտ. Douaiի, Dietzgenի և Sternի գրածներն): Պարագան է ըստ գաղղիական առածին եթէնքով Փարիզը չիշի մէջ դնելու. այո՛, պարոն ազատութեան ազատական, եթէ մարդը կապիկէ սերած է, եթէ անասնոց պէս չունի աննիւթ հոգի, եթէ բանական պատճառ մը չէ իր գործոց, եթէ ֆիզիքական բնութեան թնկերութիւնն պէս անոր ալ մտքի ու կամքի ամէն գործերն ինքնորոշումէ առաջ չեն գար այլ հարկեցուցիչ պատճառներէ, եթէ ինքնորոշումն իրօք ցնորք մըն է, ինչպէս կ'ըսես, և կամքը բնազդում, իրաւ կ'ըլլայ հետեւանքն թէ

մարդկային գործոց մէջ բարոյական զանաթանութիւն չկայ, թէ մարդս հարկաւորապէս կը գործէ և ո'չ ազատութեամբ, հետեւաբար ազատ չէ. բայց բոլոր այդ եթէներն ենթադրական կ'ընեն ըսածներդ և ոչ զրական, և պէտք ունին համոզիչ ապացոյցի և ո'չ ցնորական նախապաշարումի: Միւս կողմանէ ինչպէս կը հաշտեցունես ինքնագիտակից անորժն, որ քու ալ խոստովանուած թեամբք կամքն է, բնազդութիւն հետ, որ գիտակցութիւն չունենալուն համար է բնազդում և հարկեցուցիչ պատճառներու ազդեցութեանց ենթակայ, կամքի ազատութեան համար, զայն քրած են պատասխանատու ընելու համար և հետեւաբար անոր քրածին մէջ բարւոյ և չարի զանազանութիւնը տեսնելու համար, կը բաւէ գիտակցութիւնը ըրածին, որուն բնական հետեւանքն է ընտրութիւնը եւ ինքնորոշումը: Ազատութեան համար պէտք չկայ որ անհատներու շուրջը դարձող ամէն բան, ամէն ինչ որ ժողովուրդներու շարժումն ու յառաջագումը կ'որոշէ, իրմէ կախում ունենայ: Իւրաքանչիւր կամք ինքն իր ըրածին պատասխանատու է եւ այս կը բաւէ մեկնելու համար մարդկային գործոց բարոյականութեան օրէնքն եւ հետեւաբար բարւոյ ու չարի զանազանութիւնը: Բայց լսեցէ՛ք զառանցանքը, մարդս ազատ ըլլալու եւ ըստեղծ համար պէտք է եղեր ծնանելէն առաջ ալ ազատ ըլլալ. «Եթէ մարդէ կային ազատութիւնը երեւակայական է, կ'ապացուցուի այն իրողութեամբ, որ մարդը ազդեցութիւն չունի այն անձանց վրայ, որոնցմէ ծնած է եւ կրթուած եւ այն կ'առնողութեանց վրայ, որոնցմով օժտուած է (Douai): Ըսել է թէ ազատ ըլլալու համար, հարկ է անպատճառ ծնողներու կամքին վրայ ազդեցութիւն ունեցած ըլլալ: ապստամբիլ զինքը կրթողներու դէմ, հարկ է ունեցած կարողութիւններն ուղղած ատեն կարենալ փոխել ո՛ր եւ է հազուադէպ մը պէս:

(Շարունակելի)

Ս. ՀԱՂՈՐԴՈՒԹԵԱՆ ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹԻՒՆԸ

ԱՌԱՋԻՆ ԴԱՐԵՐՈՒՆ ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆԵՐՈՒՆ ՄԷՋ

(Շար.)

Գեանադամբաններու վերոյիշեալ նկարներուն մէջ՝ որոնք խնջոյք կը ներկայացնեն, կը տեսնուի միշտ եօթն անձերու անփոփոխ թիւը, որ մտածել կուտայ այն եօթն աշակերտներուն՝ որոնք, ըստ Աւետարանի Սրբոյն Յովհաննու, յարուցեալ Յիսուսի հետ ճաշեցին Տիբերեայ ծովուն ափանցը վրայ։ Եւ դարձեալ, այս գէպքին ներկայացումը երբեմն աւելի լուսաւոր կերպով կը յայտնուի այն պարագայով որ հրաւիրեալք ներկայացուած են գրեթէ մերկ, ցոյց տալու համար որ ասոնք ձկնորսներ էին, եւ թէ նոր կուգային իրենց նաւակներէն որոնց մէջ բոլոր գիշեր որսալու աշխատեւ էին, ինչպէս կը պատմէ Աւետարանը։

Եօթն անձանց այս մասնաւոր եւ տեսական անայլալ տրամադրութիւնը՝ հացով լեցուած եօթը սակառներով, մեզի թոյլ կուտայ գանազանելու՝ չիրական որմանկարներու մէջ, Ս. Հաղորդութեան խնջոյքը երկնաւոր խնջոյքէն. հրաւիրեալներուն թիւը փոփոխական է այս վերջինին մէջ, եւ միւս պարագաները բոլոր կը պակսին։

Ոչ նուազ կարեւոր բայց շատ աւելի հազուադիւրէն է գեանադամբաններու նկարներուն մէջ նաեւ ջուրի հրաշալի կերպով գինիի փոխուիլն Կանայի հարսանեաց մէջ. առանց օրինակի Ս. Հաղորդութեան խնջոյքին եւ խորհրդական գոյացափոխութեան։ Ս. Պետրոսի եւ Մարկէղիմոսի գեանադամբաններուն երկու որմանկարները կը ցուցնեն մեզ զայն շատ աւելի զգայացունց կերպով, երկնաւոր խնջոյքից հետ մէկտեղ՝ որուն ամենապատշաճ գրաւակման է Ս. Հաղորդութիւնը. ասոր կը հանդիպինք նաեւ բազմաթիւ վիճադագաղներու վրայ։ Իսկ եթէ Հոովմայ քրիստոնէական գեանադամբաններուն մօթին պատերուն վրայ ստէպ կրկնուող այս տեսարանները կը հաստատէ Ս. Հաղորդութեան վարդապետութիւնը, սակայն կան ուրիշ քանի մը մասնաւոր նկարներ՝ յիշաւի

թանկագին, որոնք կը հաւաստեն մեզ զայն շատ աւելի բացայայտ եղանակաւ։ Այս վերջիններուն վրայ դեռ աւելի պիտի երկարենք ու պնդենք, իրենց կարեւորութեանը տեսակէտով։

Ամենահինն է խմբանկար մը՝ երկու անգամ կրկնուած Ապպեան պողոտային վրայ գտնուող Սուրբ Կալիստոսի գերեզմանատան գեանափոր մատուռի մը մէջ. այն կողմ զոր երեւելին Տէ Բոսի կոչեց «Ստորերկրեալք Լուկինայ», շատ հին գեանամաս մը, որուն շուրջը տարածուեցաւ ապա ամբողջ գեանադամբանը։ Խնդրոյ առարկայ եղող որմանկարը երկրորդ դարու սկիզբէն վերջը՝ չկրնար ըլլալ. և իր հեղինակն ալ միեւնոյն արուեստագէտն է որ նմանօրինակ խմբանկարներն յօրինած է. որոնք կը ներկայացնեն Պոմպէական մաքուր ոճին բոլոր որոշիչ մանրամասնութիւնները։ Հոն կը տեսնուի ձուկ մը որ կը կրէ ողորմահիւս կողով մը հացով լեցուն, որոնց մէջ կարմիր գոյնովը կը ճանչցուի գինւոյ պղտիկ բաժակ մը։ Ո՞վ շտեմներ աս խմբանկարին մէջ՝ Աւետարանի մէջ պատմուած հացի բազմապատկութեան յիշատակութիւնը, որ սակայն ուղղակի վերաբերուած է Ս. Հաղորդութեան՝ պինտոյ տեսակին ներկայութեան պատճառաւ, որ այլապէս պործ մը, կսպ մը չունէր այս հրաշքին հետ։ Այս խմբանկարին մէջ ո՛չ միայն պէտք է ճանչնալ Ս. Հաղորդութեան խորհրդոյն ակնարկութիւն մը, այլ նաեւ պէտք է անոր մէջ տեսնել ճշմարիտ և յատուկ յայտարարութիւն մը քրիստոնէական հաւատոյ հրամանակարգ վարդապետութեան, իրական ներկայութեան. եւ յիշուի, ձկան դրական միութիւնը՝ սակառին մէջ բովանդակուած Ս. Հաղորդութեան նիւթերուն հետ, ակն յայտնի ցոյց կուտայ նուիրական տեսակներուն նոյնինքն Յիսուսի Բրիտանոսի հետ համաթափանցումը (conpénétration)։

Գերահռչակ հնախօսն Տէրօսի, անմիճելի հեղինակութիւն գեանադամբաններու մասին, կարծիք ունեցաւ թէ Լուկինայի գեանափորներուն ձուկը ներկայացուեցաւ կենդանի և ջրոյ մէջ լողալով և սակառը իր թիկանցը

վրայ, և նոյնացուց զայն Ս. Պաղ/նոսի այս խօսքին հետ. «Հաց ճշմարիտ և ջրոյ կենդանւոյ ձուկն»: Ուրիշները սակայն կարծեցին թէ ձուկը ջուրէն դուրս էր և հացերու սակաւին պարզապէս միացած: Սակայն այս երկու կարծիքներու մէջ ալ խմբանկարին Ս. Հաղորդութեան իմաստը միեւնոյնը կը մնայ իր էական մասին մէջ: Միայն պիտի աւելցնեմ որ ոգորեայ սակաւը և սպաւեղէն անօթներն՝ ներկայացուած Լուկինայի գետնափորներուն որմանկարին վրայ, իրականապէս ցոյց կուտան մեզ թէ ի՞նչպէս առաջին դարերու մէջ սովորութիւն ունէին տանելու սրբանուէր տեսակները, և յուշ կ'ածեն մեզ Ս. Հերոնիմոսի առ Ռուստիկոս գրած մէկ նախակին սա կտորը. «Ոչինչ դանդաղագոյն քան զնա որ զմարմին Տեառն յոգորեայ սակաւի քանիցի եւ զարիւն նորա յապակեոջ»: Եւ, միշտ առանց դուրս ելլելու Ս. Կալլիստոսի գետնաքամքաններէն որ հոռիմայ գերեզմանատուններուն ամենէն կարեւորն է, հիմա ուսումնասիրենք այն գետնափոր մատուռներն որոնք կը կոչուին «Ոորհրդոց», ուր հիացումով կը գիտուի խորհրդաւոր նկարներու շարքերէն ամենագեղեցիկը. երրորդ դարու սկզբնաւորութեանէն աւելի յետագոյն չեն:

Բոլոր այս ամենայարգ որմանկարներն, անշուշտ սրուեստագէտին ներշնչութեամբ աստուածաբանէ մը կամ նախկին Եկեղեցւոյ վարդապետէ մը, սքանչելի տրամաբանական կարգով մը իրարու կը յաջորդեն. շարքին սկիզբը ներկայացուած է Մովսէս որ կը հարուածէ անապատին ժայռը և անկէ կը ցայտեցնէ ջուրը. խորհրդանիշ մըն է այդ Եկեղեցւոյ որ կը բղխեցնէ շնորհաց ջուրը, սկիզբն խորհրդոց, խորհրդական վէմէն որ Բրիստոսի օրինակն է. Եւ, յիշաւ, խորհրդաւոր ձկնորսը ժայռէն բղխած այս ջուրին մէջէն փոքր ձուկ մը դուրս կը քաշէ, այսպէս խորհրդաւոր կերպով ներկայացնելով Մկրտութիւնը. ասոր կը յաջորդէ Մկրտութեան ուրիշ մէկ օրինակ մը, Պրոպատիկէ աւագանին մէջ բուժուած անդամաւոր ծին պատկերը:

Բրիստոսեայ սկզբնաւորութեան խորհուրդէն վերջը, ահա՛, քովի պատին վրայ երեք տեսարաններ որոնք կ'ակնարկեն Ս. Հաղորդութեան մեծ Ոորհուրդին. մէջ տեղը կը տեսնուի սովորական ներկայացումն խնջոյքի եօթն անձերու՝ եօթն սակաւներով: Այս հրաւիրեալներն որ կ'ուտեն հացն ու ձուկը, անտարակոյս հաւատացեալներ են, չնորհքի ջուրով լուացուած ու մոքրուած, կը բազմին անոնք Աստուածային Գառնին խնջոյքին պատրաստութիւն ու առհաւատչեայ գրաւական յաւիտենական խնջոյց յերկնաւոր երանութեան: Բայց հոս՝ խմբանկարին Ս. Հաղորդութեան վերաբերումին նշանակութիւնը ևս առաւել բացայայտօրէն կ'երեւի ձախակողմեան տեսարանով, միակ իր տեսակին մէջ՝ ցարդ գտնուած գերեզմանական նկարներու մէջ. կը տեսնենք հոն անձնաւորութիւն մը՝ միայն բալիւմ հագած, որ կանգուն կանգնած է եռոտանի սեղանի մը առջեւ որու վրայ կը գտնուի ձուկ մը և հաց մը. բացայայտօրէն սրբագործելու դիրք մը առնելով, աջ ձեռքը կ'երկնցնէ զէպի այս կերակուրը, մինչդեռ անդի կողմէն, սեղանին մօտը, կանգնած է կին մը քօղով ծածկուած որ բազուկները կ'երկնցնէ զէպի երկինք, աղօթքի ծիսական դիրքին մէջ: Այս նկարին նշանակութիւնն ի վեր հանել զժուարին չէ. Գոհութեան խորհրդոյն զոհաբերութեան գործն է ան. և ճիշդ սրբապարծութեան վայրկեանն է, երբ հացը կ'ըլլայ ձուկ, այսինքն՝ սրբազնասուրբ մարմին «Յիսուսի Քրիստոսի Որդւոյն Աստուծոյ Փրկչի»: Ըսող եղաւ որ աջակողմեան աղերսարկու կինը կը խորհրդանշէ այս մատարան մէջ թաղուած ննջեցելոյն հոգին. եւ յիշաւ ամէն ոք գիտէ որ այս դիրքը կը նշանակէ հանգուցեղոց հոգին: Բայց այս տեղը շատ ազնիւ է մասնաւորի մը համար. և ինծի աւելի հաւանական կ'երեւի որ աս պատկերով սրուեստագէտը ուզած է ցուցնել Եկեղեցին, որուն խորհրդական նշանակն է նաեւ աղերսարկու կնոջ նկարը: Ուստի, ըստ իս, Եկեղեցին է ան որ իր աղօթքը կը բարձրացնէ զոհի ժամանակ: Այս մեկնութիւնը կը համա-

մանեց եկեղեցական-բարեկարգական շատ իմաստուն կանաներ:

Արտաշիր պատանի թագաւորը, հակառակ Ս. Սահակի խրատներուն և յորդորներուն, մեղկ, անառակ կեանք մը կը վարէր, և զամէնք կը գայթակղեցնէր: Եւ որովհետեւ նախարարներէն շատերը առիթ կը փնտռէին միապետական իշխանութիւնը Հայաստանէն իսպառ ջնջելու և իրենց գաւառներուն մէջ ինքնօրէն ազիկամի իշխելու, մարերնին գրին իրենց պատանի թագաւորին անկարգութիւնը պատրուակ բռնելով, զանիկայ Պարսից արքային ձեռքը մատնել: Ուստի Ս. Սահակին գաղով ստիպեցին զանիկայ որ իրենց հետ Պարսկաստան երթայ և Արտաշիրը ամբաստանէ:

Ս. Հայրապետը անոնց չար և ազգակործան խորհուրդը հասկնալով շատ տրտմեցաւ, և աղաչեց որ տան մը համբերեն և ազօթ են Աստուծոյ որ իրենց ելից հտարք մը ցոյց տայ: Բայց տեսնելով թէ նախարարները կը յամառին իրենց որոշման մէջ, տխրող փղձկեցաւ, արցունքներն սկսան հոսի, և այլեւս չկրնալով անոնց պատասխանել գնաց փակուեցաւ սենեակ մը. և շատ օրեր անմխիթ արողաց Հայաստանի նիւթական և բարոյական կործանումը որ վերահաս կը տեսնէր: Երբոր նախարարները դարձեալ քովը ժողովեցան և ջանացին զինքը իրենց հետ միաբանելու, Սուրբը նորէն արտաստեալաւ աղաչանքով յորդորեց զիրենք որ ետ կենան իրենց չար խորհուրդէն, և ջանաց համոզել զիրենք որ քրիստոնէսայ կայսեր ձեռքով տեսնուի իրենց թագաւորին դատը և ոչ թէ անհաւատ Պարսկին ձեռքով, բայց ի զուր:

(Շարունակելի)

ԾՆՈՂԱՅ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

ԻՐԵՆՑ ԶԱՒԱԿԱՅ ԿՐՈՒԹԵԱՆ ՆԿԱՏԱՄԱՐ

Որ և է արարած մաքուր կլիմայի մը տակ քաղցր օդ ծծելու հաճութենէ գուրկ չէ, մանսւանդ Աստուծոյ ձեռաց ամենալինաւոր արարածը՝ մարդն որ լսնականութեամբ տողորհալ ամէն մասամբն յարաժամ երջանկութեան կը դիմէ. ի՞նչ տաժանելի բեռան տակ պիտի հիւծի ան՝ երբ աստուածային բարեբաղդ վիճակէն ապախտ մնացած, աս երանելի վիճակին չհամար, երջանկութեան չտիրանայ, թող չփոտահի սոյնպիսին կենաց տոկուն երկարութեանը, կամ փարթամ ընչից առաւելութեանը, որովհետեւ վերջապէս յուսախաբ պիտի աւաղէ: Այո՛, կարելի չէ աշխարհիս որ և իցէ զանձերով զայն ձեռք բերել, ինչպէս կը վկայէ Յօր երանելին ըսե-

սելով՝ Բուստն ու բերեղը կ'անշքանան, ոսկին և արծաթը կը չլանան, յակնթն և որ և է գանձն իրենց արժէքը կը կորսնցնեն. մի միայն իմաստութիւնն է որ կը պանծայ մարդս երջանիկ ընելու, աս իմաստութիւնը չի ստացուիր ուրիշ կերպով բայց եթէ ուշիմ ու րարեկրօն հսկողութեան մի ներքեւ տղա-յական կամ երիտասարդական տարիքը դաստիարակելով. առանց կրթութեան կիրք և ախտք սանձարձակ կ'աճին և Աստուծոյ ձեռաց այդ ընտանի և գերազանց արարածը վայրենեաց անգործելի վիճակին կը խռարհեցնեն, որով կը մնայ զուրկ իր վերջին նպատակէն, երջանկութենէն:

Ասոր համար ամէն ազգաց քով ուսման կրթութիւնը անհրաժեշտ տարր եղած է իւր վերանորոգութեամբ: Ինչէ՞ն է ազգաց և քաղաքաց իրարմէ տարբերութիւնը, կամ երեւելի ընտանեաց աւաղելի յետնութիւնը, կործանումը. արդարեւ փոխանակ զըզրոցական քաղցր կենաց փառք ճոխանսւլու և յառաջդիմութեան ընդարձակ ասպարէզի մէջ սիգաճեմ ընթանալու ապակա-նարար բարուց զեղխութեան մէջ վարած կենցաղն է. արդ օտար ազգաց եւ մերայնոց և կշտամբանայ արժանի չըլլալու համար, ծնողք մէկդի թողլով անտարբերութիւնը իրենց զաւակաց կրթութեան հոգ տանելու և զանոնք զըզրոցական կենաց ենթարկելու են: Հեղի քահանայապետը թէ եւ ինքն աստուածովախ և որդեսէր կոյր մըն էր, սակայն զաւակաց չար վարուց աչք գոցելուն և անոնց դաստիարակութեան անհոգ ըլլալուն համար՝ Աստուած Սամուէլ մարգարէին ձեռք սնոր վրայ սարսափելի անէծքներ թափեց և զԻսրայէլ Փղշտացւոց գերի ըրաւ:

Այո՛ երիտասարդական տխուր հաճոյքն ու բերկրանքն առաքելութեամբ և ուսմամբ աճելու են, և վնասակար ախտերն նկուռն եւ սանձահարկալ մնալու են, եւ ոչ թէ տիրելու են:

Ինչէ՞ն է որ կը տեսնենք երբեմն շնորհապեղ դէմքի մը տակ դարանած ծոյլ ախտը, զիտաւոր գլխոյ մը վրայ ինքնին բռնած անձնավստահութիւնը, քաղցրահայեաց սեաւ

աչաց ներքեւ կամ կտրմարտալ շրթանց առ-
բերան հանգչող ստոյ կամ մեծամտութեան
ամբարահաւած ոգին, ուղղահայեաց լինթացից
մէջ շուայլ եւ գեղին կինցաղ օր, եւ գեռ
այլեւայլ գեղեցիկ եւ վսեմ տեսքերու վրայ
ո՛ր գիտէ ո՛ր բարկացայտ կայծեր ծածկեալ
են, ո՛ր անյութ զգացմունքներ արմատ
ձգած են, կարելի է ես սխալիմ, սակայն
ծնողաց ողբեր եւ ցանգասներ շատ անգամ
եւ շատ տեղ լսուած են թէ ճղաս այսպէս
չէր, հիմակ բոլորովին փոխուած է. մինչդեռ
չեն գիտեր կամ չեն հասկնար որ ան վիճա-
կը կատարելութիւն ստացած է ի յոռին. ան
ախտերը ժամանակին բարեկրթութեան պար-
տիզին մէջ ճարտար ձեռաց մանգաղի խստու-
թեամբ չեն խլուած. աւա՛ղ, խեղճ ծնողք.
բայց ա՛լ խեղճ տղաք որ այդպիսի ապակա-
նարար օգով վայրենի բաղեղի նման աճելով
զփախաւ ապագայի մը տէր եղած են:

Ձեզ ուրեմն, ծնողք, պարտք է, եւ սրբ-
բազան պարտք զաւակաց կրթութեանը հոգ
տանիլ, զանոնք իրենց բնածին չար հակ-
մանց ազատ չթողուլ, ալ զանոնք ընտա-
նեցնելով բարեկրթութեան կրթարաններու մէջ ա-
նոնց ներկան եւ ապագան ապահովել, զա-
նոնք իրենց յարստամ գոչող երջանկութեան
մղելով. բայց ոչ թէ ձեր քով, ձեր հսկողու-
թեան ներքեւ, այլ դարձեալ կ'ըսեմ՝ բարե-
կրթութեան կրթարաններու մէջ. որ մեր որերուն
բազմանալու վրայ են, ուր երիտասարդա-
կան տիօք աճեցուն ոգին մարդկային կար-
եաց ամենայն գաղտնեաց իւրովսանն հըմ-
տանալով բարին ու չարը քաջապէս որոշէ,
յոռին աքացէ եւ բարւոյն զհետ պնդի, գի-
տուն ու առաքինի, իմաստուն Հայ մը ըլ-
լայ, Ազգիս փառք եւ ծնողաց պատիւ. ահա՛
ան ատեն ծնողք իրենց երախտագէտ շնոր-
հակալութիւնը յայտնեն ըսելով, Տղաս այս-
պէս չէր, հիմակ Ես փոխուեւ է, ամեն բա-
նի խելք կը հասնի, առաքինի ու իմասուն
մարդ մըն է. ահա՛ աս ըլլալու է ծնողաց
յոյսն եւ զաւակաց ապագան:

Ա. Վ. ԲԱՂՆՈՒՆԻ

1914 Փետր. 27

ԱՅԼ ԵՒ ԱՅԼՔ

ՄԱՐԲ ԹՈՒՆՅՆ՝ որ Միացեալ Նահանգաց ամե-
նէն սրամիտ անձը կը համարուի օր մը ուղեւոր
իր բարեկամ քարոզիչներէն մէկուն խաղ մը իա-
ղալ, քարոզէն վերջը անոր քովը գնաց եւ ըսաւ.

— Բարեկամ, քարոզը շատ լաւ էր, միայն թէ
ես գիրք մը ունիմ որուն մէջ անոր առաջին բա-
ռին մինչեւ վերջինը ամբողջ կը գտնուի:

Քարոզիչը ինքզինքը իբրեւ բանագող ամբառ-
տանուած համարելով առնուեցաւ, բողբոջեց, ապա-
ցոյց պահանջեց: Մարք Թունէյն թողուց որ երկու
օր տագնապալի վիճակի մը մատնուած միայ ինեղճ
քարոզիչը: Երրորդ օրը վերջապէս դրկեց անոր պա-
հանջած ապացոյցը, որ բառգիրք մըն էր....

ՌՈՒՍ ՆՇԱՆԱՒՈՐ օգնականորդ Մ. Սիբորսքի
Մարտ 5ին Բեդերսպուրկի վրայ ու շրջակայքը հիա-
նալի պտոյտներ կատարեց իր «Իլիա Մուրոմէց» հըս-
կայ երկհարթ օդանաւով: Մէկ ու կէս ժամ թռաւ,
իր հետ ունենալով 16 հոգի: Օգնականը երբէք չէր
տատանէր սովորական օդանաւերուն նման: Ուղե-
ւորներէն մէկը յայտարարեց թէ կատարեալ աղա-
տութեամբ կը շարժէին օդանաւուն մէջ, ուր հան-
գըստաւէտ սենեակ մը տրուած էր իրենց, հիանա-
լիօրէն ջեռուցուած: Լոյսը կ'առնուէր խոշոր պա-
տուհաններէ, ուրկէ կը դիտէին իրենց շուրջը, եւ
աստիճանական վերելքնին: Շարժիչ մեքենաները
կը հայթայթէին ջերմութիւնը: «Իլիա Մուրոմէց»
ունի հարկւրական ձիու ու ժով չորս շարժակ (moteur),
երկուքը՝ օդանաւուն առջեւը, իսկ երկուքը՝ ետեւը:
Օդանաւուն հնարիչը աւելցնում էր կարգադրած է որ
շարժակներէն երկուքը միայն կրնան բանիլ փոխա-
նակ չորսի, առանց ո՛ր եւ է անպատեհութեան եւ
արկածի տեղի տրուելու: Ու արդարեւ ալ, օդանա-
ւը Բեդերսպուրկի վրայ շրջած միջոցին շարժակնե-
րէն մէկը յանկարծ կեցաւ. օդանաւուն արագու-
թիւնը նուազեցաւ, բայց շարունակեց թռիչքը: Ու-
ղեւորներէն մէկը նոյն միջոցին շտկեց շարժակը:
Մ. Սիբորսքի կը մտածէ հարկեր ձիու ոյժով հ'ն-
գերորդ շարժակ մըն ալ դնել, աւելցնելու համար
արագութիւնը օդանաւուն: «Իլիա Մուրոմէց» ֆար-
ման երկհարթ օդանաւու մը հնգապատիկ մեծու-
թիւնն ունի: Մետաղ կալւածքը 65 ոտք երկարու-
թիւն ունի, իսկ սենեակները շինուած են 28 ոտք
երկարութեան վրայ: Բոլոր սենեակներն ալ ունին
երկու կողմէն խոշոր պատուհաններ, նոյնպէս պա-
տուհաններ առաջակողմէն՝ գննութեանց եւ լու-
սանկար առնելու համար: Գիշերը սենեակները կը
լուսաւորուին էլեկտրականութեամբ: Օդանաւը 400
ձիու ուժ գործածելով կրնայ աւելի քան մէկ թո-
նօ օդակար բեռ առնել հետը, բացի իւրի պաշա-
րէն: Իրաւ ծովային նախարարութիւնը այս օդա-

նաւէն հինգ հատ պիտի յանձնարարէ: Ուրիշ երկիրներ եւս կը պատրաստուին շինել «Իլիա Մուրոմէց»ի նման օդանաւեր, որ օրուան մեծագոյն նորութիւնն է եւրոպայի մէջ:

ԺՈՒԱՌ պարկեշտ եւ բարեհամբաւ մարդ մըն էր. ամէնուն յարգանքը եւ վստահութիւնը կը վայելէր. բայց դժբախտաբար իր կրօնական պարտականութիւնները չէր կատարեր:

Իր կինը, ընդհակառակն, շատ ջերմեռանդ էր եւ բարի օրինակովը ամբողջ քաղքին շինութիւն կու տար: Երանի՜ այն այրերուն որոնց Աստուած այսպիսի կեանքի ընկերներ կը պարգեւէ:

Ասոնք որդի մը միայն ունէին, զոր մայրը բարեպաշտօրէն մեծցուց: Սակայն այս ջերմեռանդ տղան ուսումը աւարտելէն վերջը կրօնական պարտքերը կատարելէ դադարեցաւ: Մայրը նկատի առնելով որդւոյն այս ընթացքը, օր մը անոր սենեակը մտնելով գնաց քովը նստաւ ու ըսաւ.

— Ո՛րդեակ, դուն ինձի այնպիսի վիշտ մը կը պատճառես որ կրնայ զիս մեռցնել... դուն բոլորովին փոխուած ես:

Տղան պատասխանեց.

— Սիրելի մայր, վստահ եղի որ զքեզ բոլոր սրտանց կը սիրեմ:

— Ինչո՞ւ տղայ, զիս սիրելը բաւական չէ: Դուն զԱստուած չես սիրեր: Եկեղեցւոյն մէջ զքեզ երբէք չեմ տեսներ այլեւս:

— Մայրիկ, ահա՛ իմ ընթացքիս պատճառը. հայրս ամէնուն յարգանքը կը վայելէ, բայց իր զատկական պարտքը չի կատարեր: Ինչո՞ւ համար ես ալ իրեն պէս պիտի չընեմ:

Ասոր վրայ, խեղճ մայրը, իր ամբողջ ուժերը ժողովելով, կը վազէ ամուսնին գործասենեակը եւ լալով կ'ըսէ անոր.

— Մինչեւ ցարդ զքեզ երբէք կշտամբած չեմ, բայց հիմայ եկած եմ քեզի ուղղելու կշտամբանք մը, որուն շատ արժանի ես: Քու անտարբեր կեանքովդ խեցիք ինձմէ զաւկիս հոգին: Անիկայ կ'ըսէ. Հայրիկիս պէս կ'ուզեմ ապրիլ:

Ժուառ պատասխանեց.

— Սիրելի՛դ իմ, հե՛տս եկուր:

Որդւոյն խուցը մտնելով անոր ըսաւ.

— Հօր մը համար ծանր է որդւոյն առջեւ իր յանցանքը խոստովանիլ. բայց եղածը եղած է. տա՛ր զիս քու խոստովանահօրդ քովը: Երկուքնիս ալ խոստովանանք պիտի ըլլանք. ես քեզմէ առաջ պիտի անցնիմ:

Ո՛րչափ տղաք դարձի պիտի գային, եթէ իրենց հայրերը այսպէս իրենցմէ առաջ անցնէին:

Որդին հօրը կը հետեւէ, ինչպէս շուքը՝ ուղեւորին:

ԱՅԻԼԷՍԻՉ...!

— Շաթէն, իշթէ վաքանս կիւնլէրի կէլ-տի, պու երլ պաշը թաթիլինտէ հէր քէս պիր թարաֆա կիտէր, ես սէն նէրէյէ կիտէճէքսին:

Արգատաշլարընն պու սիւալը գարշըսըն-սա զայլթ սըգըլան չօճուգ միւթէրէտտիտ պիր սէս իլէ,

— Նէրէյէ՞ մի: Տօղրուսը պէն տէ պիլ-մէմ. Պէքլէյօրըմ քի...

— Նէ՞ պէքլէյօրսըն, իյտի միլլի կիւնիւ-նիւ՝ մի:

— Եօգ ճանրմ, օ բէք կէճ տիր:

— Էօյլէ իսէ նէ՞ պէքլէյօրսըն:

— Ես պապամտան վէ ես աննէմտէն պիր մէքթուպ պէքլէյօրըմ... պագալըմ նէ չը-ար...

Արգատաշլարը պու ճէվապա հայրէթտէ գալարապ,

— Սէն տէ բէք թօհաֆ պիր չօճուգսըն, նէ՞ զանն իտէրսին, բէտէր վէ վալիտէն սէ-նի գապուլ իթմէյէճէքլէ՞ր մի, տէտիլէր:

Շաթէն կէօզլէրինտէն ինճու տանէսի կի-պի կէօզ եսշլարը: ազըտարապ տօսթլարընա պագալը վէ նիմ քէսիք պիր սէս իլէ.

— Է՛, պէլքի, տէտի:

Արգատաշլարը պու իշտէ պիր հիքմէթ օլտուղընը քէշֆ իտէրէք տահա զիյատէ ա-րաշթրմագ իսթէմէտիլէր վէ միւքեալէմէյի հէման պաշգա մէվզուլարա չէվիրտիլէր:

Օ բէնչչէնպիհ կիւնիւնիւն թէնէզզիւհիւ Շաթէնին մէքթէպ բէֆիզլէրի իշուն բէք քէշֆի կէշտի: Էվվէթ, արա սըրա պու չօ-ճուղըն եէս ու մէլալընա սէպէպ նէ՞ օլտու-ղընը պիրպիրլէրինէ սօրարլարտը. ֆագաթ բէք տէրինինէ կիթմէք իվթմէքսիզին եինէ էլլէնճէլէրինէ պագարլարտը:

* *

Շաթէն բէտէրինէ պիր մէքթուպ եազ-մըշտը:

Պիր մէքթուպ տա վալիտէսինէ եազմըշտը:

Պու հէր իքի մէքթուպ տա զայլթ բէ-ճաքեար պիր սուրէթտէ եազըլմըշտը, հէր

ի քիսիւնստէ տախի չսլըշմաղը, ուսը վատ իտիյօրտը:

Մէքթուպարըն հօլա չըգտըղընա ալթը կիւն օլմուշտը: Աճէպա զավալը չօճուգ տահա նէ՝ գատար վագրթ հասրէթլէ պէքլէյէճէքտի:

Նակեհա՛, պիր էօյլէն թէնէզզիւհիւ էս նաաընտա միւտիրի մէքթէպ օնը չաղըրըր:

— Շաթէն, իշթէ սանա պիր մէքթուպ:

Զօճուգ եապըյա պագար:

— Ա՛, պապամտան տըր:

Սէվինճ վէ հէյէճանընտան լալէ կիպի գըզարըր: Պիր քիւշէյէ չէքիւէրէք շու աթիտէքի մէքթուպը օգուր:

20 Դեկտեմբեր

«Սեվինլիլ հվլասըմ,

«Մէքթուպըն պէնի ֆէվգ էլ ատէ մէմնուն էլէտի: Էյի պիր չակիրտ օլմագ հօլընտա տէվամ իթտիյինի կէօրտիւմ: Էմին օլքի սանա միւքեաֆաթ վէրմէյէ ունութմույաճաղըմ: Իշթէ պու տէֆա սանա մէքթուպըմ տէրունիւտէ լէֆֆէն օն ֆրանք հօլայօրտըմ, պու բարա, եըլպաշը միւնասէպէթիլէ վէրիլէճէք թաթիլ միւտտէթինտէ ուֆագ թէֆէզ էլէնճէլէրինէ սարֆ իտիլմէք իշուն տըր: Եարըշա սէյր իթմէյի սէվէրսին, իշթէ պու սուրէթլէ կիտէպիլիբսին:

«Փղոււմ, չօգ թէէսիւֆ իտէրիւմ քի սէնի էվէ կէթիրէմէյէճէլիւմ: Էյէր եալընըզ օլմուշ օլսամ, պէնիւմ տէ իսթէտիյիւմ պու իտի: Լաքին սէրպէսթ տէյիլիւմ: Էվէ եէնի էէնի տաւալար կէլիբսէ, գարըմ սըզըլըյօր... Հէմ տէ սէն պիր բարչա եարամագ օլտուղըն իշին գօրգարըմ քի էվէ կէլէճէք օլուրտան օնըն օտանմասընա սէպէպ օլուրսուն, զաթէն տահա քէնտիսինի տէ հիշ կէօրմէմիշսին...»

«Պագ օղլոււմ: հօլճուլըղընը եա Զատիկէ վէ եախօտ պէօյիւք թաթիլէ պրապմաղըղըն իդթիզա իտէր: Օ վագիթա գատար պէն տէ չալըշըրըմ քի սէնի պիր գաշ կիւն էվէ գապուլ իթմէյէ բաղի օլտուն: Շիմտի իշին, մէսէլէ տահա բէք թագէ օլտուղընտան, օ խուսուստա հիշ պիր շէյ սէօյլէյէմէմ:

«Թիքրիմի անլայօրսըն ա՛, իսրար իթմէյէ հաճէթ հօգ տըր...»

«Իէսթրին
«ԷՏՄՕՆ ՆԱԹԷՆ»

Պու մէքթուպը օգուր օգոււմագ պիշարէ չօճուղըն կէօղլէրի եաշ իլէ սօլտու:

Օ քէնտի քէնտիսինէ տէյօրտը:

— Կէօրիւյօրմըսըն շու պապամին եարտըղ էյի շէյի: Աճէպա վալիտէմի հանընտա պրագմըշ օլսա, նէ՞ օլուրտը: Պէօյլէ գարընընը թաթիլիզ իտիպ պիր պաշգասընը ալմայա նէ՞ լիւզոււմ վարտը... Իշթէ մէքթուպընտան աշիքեար տըր քի պէնի իսթէմէյօր... պէն ալտուրը գարը իշին ֆազլա իմիշիւմ... Էվտէ պուլուռնըրսամ օնուն ճանը սըզըլըրմըշ... Էվլէթ, պէն օ պիրինին օլլուլըմ... իսթէմէտիյի գարըսընըն էվլատըյըմ...»

Զօճուգ մէլիլ մահզուն պու միւլահագաւարա տալմըշ, հալլուտա քէյֆ իլէ օյնայան արգատաշլարընը սէյր իտիյօրտը:

— Շաթէն, նիշին կէլմէյօրսըն, աճէպա մէքթուպը էզպէ՞ր մի էօյրէնիյօրսըն:

— Պրագըն պէնի, բէճա լատէրիւմ:

Օ պու սըրատա օն իքի սէնէ քէտէր վէ վալիտէսինին հանընտա էօմիւր կէշիրմիշ օլտուլը Էվի տէր խաթըր իտիյօրտը: Բէնտիսի օ Էվին սարիպի վէ բատիշարը իտի... Բէտէր տէ վալիտէ տէ քէնտիսինի սէվէրլէր իտի: Օ Էվտէ ալա սըրա վագը օլան գարը գօճա նիզալարընը շիմտի կէօզ էօնիւնէ կէթիլիյօրտը վէ օ վագըթ պուլալարտան պիր շէյ անլայամամասընա չաշըյօրտը: Իէտէր վէ վալիտէսինին էվլէլէճէ պօղուշըպ, պատէհու ալըլալարընը վէ պիլ ախէրէ տէ թաթիլիզ վագը օլուպ հէր քէսէ գարը վէրիլէն չէքէլիյի ալիշիւնիւյօր, տիւշիւնտիւքճէ միւքէտտէր օլույօր վէ հէլէ պապասընըն թէքրտըր էվլէնտիյինի խաթըրընա կէթիրտիքճէ հիճապընտան գըք գըրմըզը քէսիլիյօրտը:

Պու արատա չան չալընտը, Զօճուգ սըրայա տիզիլէրէք մէրտիվէնլէրտէն հօգարը չըզըյօրտը, ֆագաթ պու չըզըշ ատէթա տար աղաճընա չըզըյօր կիպի քէնտիսինի միւլթ հէզզի իտիյօրտը:

(Մապաշի վար)

բէն անմիջապէս առաջ հանդիպող կերակրին եկ Արա-
րիչը և ընդ հովանեաւը երգումն յեր թեմին ամէն
եկեղեցիներուն մէջ ժողովրդապետական պատարագին
սկիզբը:

«Ասկէ զստ կը յանձնարարենք հաւատացեալնե-
րու և յատկապէս բարեպաշտ անձերու որ ամբողջ
ընտրութեանց միջոցին աղօթեն Ձերանայի համար:

† ԼՈՒԻ, Արեւայիսկոպոս Պաւլոսի
† ԲԻԷՌ ՄԱՌԻ, Եպսկ. Գլխումնի
† ԲՕԼ, Եպսկ. Սէն-Ֆլուռի
† ԹՈՄԱ ՅՐԱՆՍՈՒԱ, Եպս. Բիւրի
† ԺՈՋԷՖ ՄԱՌԻ, Եպսկ. Թիւրի
† ՀԷԿԻՌՈՒ ՌԱՖԱԵԼ, Եպ. Լիմոնի

ՀԱՅ-ԿԱԹՈՂԻԿԷ ՊԱՏՐԻԱՐԿԱՐԱՆ.— Ուրախու-
թեամբ կ'աւանդենք որ մեր Հայ Կաթողիկէ Հասարա-
կութիւնն ալ օսմանեան խորհրդարանին մէջ աթոռ
մը ունեցաւ: Վսեմաշուք Յակոբ Էֆէնտի Խալաֆեա-
նի երեսփոխան ընտրուելով:

Թէեւ վերջական ըստած ժողովը քանի մը ա-
միս Էջմիածնականաց Պատրիարքարանը և ալուր
դեպքերով ամէն ճիգ թափեց իր անդամներէն Ոսկեան
կամ Մարիկեան Էֆէնտիները ընտրել տալու համար,
և Յակոբ Էֆէնտի Խալաֆեանի պէս արդիւնաւոր և
ընդհանուրին համարման արժանացած անձի մը ընտ-
րութիւնը խափանել ջանալով, վաղրկեան մը, Հայ
Կաթողիկէից երեսփոխան մը ունենալու իրաւունքն
իսկ վտանգելու չվարանցաւ, բայց Մարաշու բոլոր
հասարակութեանց միաձայնութեամբ յաջողեցաւ
վերջապէս Վսեմաշուք Խալաֆեան Էֆէնտի ընտրու-
թիւնը:

Յակոբ Էֆէնտի Խալաֆեան համոզուած, բարե-
պաշտ, առատաձեռն, քործունեայ կաթողիկէ մըն է
և միանգամայն Մարաշի Հ. Կ. Հասարակութեան
մեծ բարերարներէն մին:

Ամենապատիւ Գերեջանիկ Հոգեւոր Տէրը հե-
ռագիրով շնորհաւորեց նորընտիր երեսփոխանը, որ
նոյնպէս հեռագիրով շնորհակալութիւն յայտնեց Ն.
Գերեջանկութեան:

Կ. Արձագանգ իր խնդակցութիւնները կը մատու-
ցանէ Յակոբ Էֆ. Խալաֆեանի և Մարաշի Հ. Կ. Հա-
սարակութեան:

✠ Մարա 48ին Խաղաղական շոգեհաւով Պոլսէն
մեկնեցաւ Գեր. Գրիգոր Վ. Հատիկեան: Ամեն. Հո-
գեւոր Տիրոջ կողմէ մինչեւ նաւը ողջերթի գնաց Գեր.
Խաչիկ Վ. Աթանոսեան: Ողջերթի գացած էր նաև
Գեր. Յովսէփ Վ. Սարուխանեան:

ՆԵՐՔԻՆ ԵՒ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳՈՐԾԵՐ.— Բարի-
զէն քաշուած հեռագիրներ կը ծանուցանեն թէ ե-
ղբական դէպք մը յեղակարծ փոփոխութեան մը
մատնած է խորհրդարանական կացութիւնը, Տիկին
Ժօզէֆին Բայեօ Ֆիլաուօ խաչագրատունը եր-
թալով ուղեց տնօրէն Պ. Բալմէթը տնտեսի, որ
Պ. Բայեօի դէմ լրագրական պայքար կը մղէր
անընդհատ, պաշտօնի գլուխ անցնելէն ի վեր, ամէնէն
ծանր ամբաստանութիւնները ընելով: Թէեւ Տիկին
Բայեօ չափազանց զրգուած ու ջլազրգիւ վիճակ
մը ունէր, սակայն Պ. Բալմէթը առանց վարանելու
ընդունեց այդ այցելութիւնը: Տիկին Բայեօ ներս մըտ-
նելուն պէս ըզվողէր մը հանելով հինգ հարուած
պարպեց Պ. Բալմէթի վրայ ու ծանրապէս վիրաւո-
րեց զոյն: Գնդակներէն մէկը որովայնին մէջ մտաւ:
Պ. Բալմէթը քանի մը ժամ վերը մեռաւ: Տիկին Բայ-
եօ անմիջապէս ձերբակալուեցաւ: Այս տուամբ մեծ
յուզում առաջ բերած է Թարիկի ամէն շրջանակնե-
րուն, և մանաւանդ քաղաքական շրջանակներուն
մէջ: Ելմտական նախարար Պ. Բայեօ դէպքը լսելուն
պէս՝ իր հրաժարականը տուաւ Վարչապետին:

✠ Շէյխ-Իւլ-Խալամ Մէհմետ Էսաթ էֆ. իր հը-
րաժարականը տուած ըլլալով, Էլզաֆի նախարար
Խալիլ պէյ Շէյխ-Իւլ-Խալամ տնտեսուեցաւ: Այս
տնտեսումին մեծ կարեւորութիւն կը տրուի, որով-
հետեւ Խալիլ պէյ բարենորոգչական գաղափարներով
օժտուած վարչադէտ մըն է:

✠ Ռուսիոյ և Գերմանիոյ միջեւ ծագելիք պա-
տերաւմի մասին եղած լուրերը կը շարունակուին:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ	
Դէպքեր եւ սկզբունքներ	177
Յիսուս Քրիստոս	180
Ազատութիւն	182
Ս. Հաղորդութեան վարդապետութիւնը	184
Եօթնակ Գրիգորներ	186
Ծնողաց պարսկականութիւնը	187
Այլեայլ	188
Այլիւսիզ	189
Տեղեկագրական	191

ԱՐՏՕՆԱՏԵՐ	ՏՆՕՐԷՆ-ԽՄԱՆԳՐԱՊԵՏ
ՅՈՎՀ. Մ. Վ. ԿԵՏԻԿԵԱՆ	ԳԵՈՐԳ Մ. Վ. ԹԵՐԶԻՊԱՆԵԱՆ

Տպարան Կ. Առնագազ Զաքարիայի, Բերա, Պայրամ փողոց թիւ 6, Կ. Պոլս

ԿԱՐԵՒՈՐ ԵՐԿԱՍԻՐՈՒԹԻՒՆ ՄԸ

Երկար ժամանակէ ի վեր պէսքն զգացուած է Ս. Գրոց ընկիր բարգմանութեան մը Հայերէն աշխարհաբար եւ Թուրքերէն լեզուներու: Այժմ Վեր. Յիսուսեան Հարց ջանիւք սոյն պէսքին գոհացում տրուած է մասամբ: Արդի գիտուններու հետազոտութեամբ նոխացած բնագիրներու վրայէ բարգմանած են յիշեալ Հարց Հայերէն աշխարհաբարի եւ Թուրքերէնի՝ չորս Աւետարաններն ու Առաքելոց Գործերը, ուղղելով զբնագիրներու սխալներն ու անհոգութիւնները, եւ մօրին ու դժուարիմաց խօսքերուն համար աւելցնելով համառօտ, դիւրիմաց եւ կարեւոր ծանօթութիւններ:

Լաւ բուղբ եւ մաքուր տպագրութիւն:

ԳԻՆ. Կազմեալ 12 դահեկան, թղթակազմ 8 դահեկան, մէկ մի տետր բարդօնակազմ 3 դահեկան:

Կը գտնուի՝ Բերա, Պատրիարքարան Կաթողիկէ Հայոց (Պայրամ փողոց), եւ Վեր. Յիսուսեան Հարց՝ Բով. եւ Պոլիս Պալենց եւ Եազընեան գրականառններու Բով. եւ Հայաստանի գաւառաց մէջ, նմանապէս Վեր. Յիսուսեան Հարց վանքերը, (Պէյրուք, Ատանա, Կեսարիա, Սեբասիա, Եւդոկիա, Ամասիա եւ Մարզուան):

WIENER BANK-VEREIN

FONDÉ EN 1869

Capital entièrement versé 130.000.000 de couronnes

Réserves: 40.000.000

SIÈGE CENTRAL à VIENNE : I. Schottenring

SUCCURSALES EN AUTRICHE-HONGRIE

Agram, Amstetten, Aussig, Bielitz-Biala, Bozen, Bruenn, Budapeste, Budweis, Czernowitz, Friedek-Mistek, Graz, Innsbruck, Jaegenndorf, Karlsbad, Klagenfurt, Krakau, Lemberg, Marienbad, Meran, Oest, Nowosielitza, Pardubitz, Pilsen, Prag, Prossnitz, Przemyśl, Salsburg, St. Poelten, Tarnow, Teplitz, Teschen, Villach, Wr. Neustadt, Zwittau:

SUCCURSALES EN TURQUIE :

Constantinople et Smyrne.

La Succursale de Constantinople (avec Siège de Galata, Place du Pont de Karakeuy et Agences à Stamboul, Péra et Scutari) fait toutes opérations de banque, telles que:

Avances en Compte-Courant nanties par des titres ou des effets de commerce.

Avances sur Marchandises.

Achat et vente de change sur l'Etranger.

Escompte d'effets de commerce.

Emission de chèques, et de lettres de crédit.

Ordonnancements télégraphiques sur la Turquie et l'Etranger.

Encaissement d'effets sur la Turquie et l'Etranger.

Encaissement de coupons, d'obligations amorties ou favorisées aux tirages.

Ouverture de Comptes-Courants, ainsi que d'accreditifs simples et documentaires.

Exécution d'ordres de Bourse.

Garde de valeurs publiques etc. etc.

Caisse d'Epargne.

Locations de coffre-fort.